



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

The image shows the front cover of an antique book. The spine, on the left, is bound in dark brown, textured leather. The main cover area is decorated with marbled paper featuring a pattern of irregular, rounded shapes in shades of yellow and tan, outlined by thin veins of green and blue. A small, light blue rectangular label is affixed to the lower-left corner of the marbled area, containing the number '1769' in a bold, black, sans-serif font. There are some minor signs of wear and discoloration on the marbled paper, particularly near the top edge.


**1769**

1234

ՆՈՐ ՎԻՃԱԿԱԶԱՆ


ԵՒ 1861

ԵՐԱԶԱԶԱՆ



ԸՍՏ ԲՆՈՒԹԵԱՆ

ԲԱԺԱՆԵԱԼ Ի ՉՈՐԾ ՀԱՏՈՐԾ



ՀԱՏՈՐ Բ



605

Կ. ՊՕԼԻՍ

— 1873 —



1871

բարօրութիւնը՝ խիստ մօտ է, բայց պակասութիւն մ'ալ ունիս որ քու յառաջագիմութեանը և հարստութեանդ կերպիւ իւիք արդելք եղած է, այն է կրթութեան մէջ ունեցած պակասութիւնդ, ասի լրացնելու համար մեծ ջանք և ուշադրութիւն պէտք է ընես, բայց տուանց ուշանալու :



40

Մարդկային ընկերութենէ բնաւ չես ախորժիր, քանզի խորուրած վարժուէր ես, և ասկէց զատ՝ հպարտութիւն ալ ունիս նախանձութեամբ հանդերձ. զի մարդու աղեկութիւն մ'ըլլալը չես կամենար, խորուրած և մարդկային ընկերութենէ հեռի գտնուելուդ համար սրտիդ մէջ չարութիւն մ'երթալով արմատացեր է, ու հետզհետէ վայրահաչութեանը չափն ալ աւելցնելու վրայ ես :

Այս պատճառաւ ահա՛ շատ մը բաղդեր հեռացեր են քեզմէ, և ապագայիդ մէջ միայն երկու բաղդ մնացէր է և կը վախցուի որ զանոնք չ'ը կարենաս վայելել եթէ այդ վայրենական բնաւորութիւնդ չ'ը փոխես :



Ծնունդդ շատ բազդաւոր է . թէ և մինչև ց'արդ մէկ քանի մեծ վտանքներ անցուցիր սակայն ապագադ շատ երջանիկ պիտ' ըլլայ : Սիրտդ լաւ ու գթոտ է , աղքատին և գթութեան արժանիին օգնել կը կամիս : Թուխ սեւ մազերով մարդու հետ յարաբերութիւն մ'ընէր : Երեք անգամ յ'անակնկալս բարութեան լուրեր պիտ' ընդունիս :



Բնաւորութիւնդ ազնիւ է բայց կրթութեան մէջ պակասութիւններ ունիս ջանա՛ որ այդ պակասութիւններն ալ լեցնես , և մարդկային ընկերութեան հաճելի մէկն ըլլաս : Երանի՛ թէ կրթութեան հետ ուսմունք ալ սորվելիք որքու բարօրութեանդ մեծապէս պիտի նպաստէ : Շատախօս մարդու հետ յաճախ տեսնուիլ քեզի անպատուութիւն և վրաս կը բերէ :



Ժամանակ մը քու բազդդ յաջող կ'երթար և ետքերն սկսաւ շփոթել , անցեալ օրերդ միշտ փառաւոր կ'երեւին քեզ , բայց մի՛ վախնար միայն մէկ քանի օր անդափոխութիւն և օթափոխութիւն ըրէ՛ , այն ատեն բազդին յաջողմունքը նորէն պիտի գայ , բայց մեծ զգուշութիւն ըրէ մարդու հետ վարուելու մասին և ըստ կարելոյն մեղմախօս և քաղցրախօս եղիր զի այսպէս կը պահանջէ քաղաքական կենաց օրէնքը :



Շատ յամառ ու խիստ բնաւորութեան տէր մէկն ես , անկրթութիւնն իբրեւ կրթութիւն ընդուներ ես , մարդու հետ վարուելուն եղանակը բնաւ չես գիտէր . ինքը զինքդ փոխփայի տեղ ես դրեր , բայց ըստ իս էշ մը կամ գաղան մը կը ներկայանաս մարդկային ընկերութեան առջեւ , և ասոր համար բազդը քեզ մէ հեռի կը պտտի , ջանա ժամ յառաջ այդ իշային ու գաղանային բարքդ փոխելու , և մարդ ըսուելու արժանի վարք սորվելու :



45

Խեղկատակութիւնը քեզի սովորական եղած է, և կը կարծես որ ըրածդ հանճարաւոր բան մ'է, սակայն գիտցի՛ր որ քու անպատիւ մնալուդ պատճառը խեղկատակ բնաւորութիւնդ է. եթէ դուն կրթութեան և ուսման պարապէիր իրա՛ւ կըտեմ որ նշանաւոր մէկը պիտ' ըլլայիր: Բայց տակաւին ժամանակ ունիս կրնաս դարձեալ ուսմունք և կրթութիւն ուսնիլ և խեղկատակութենէն ազատուելով տաղանդաւոր մէկն երեւնալ ընկերութեան առջեւ:

46

Որչափ որ դուն չես այնչափ զգար, սակայն ես լաւ գիտեմ որ քու վիճակդ ցաւալի է, և առ ալ մի միայն յոռի բնաւորութենէդ յառաջ եկած. քու անհոգութիւնդ, թուլութիւնդ և ծուլութիւնդ զքեզ թշուառացուցեր է, և եթէ այդ ընթացքդ շարունակես հետզհետէ մեղամաղձոտ պիտ' ըլլաս: Ուստի՛ խորհուրդ կուտամ քեզի որ ժամ յառաջ տեղդ փոխես և բազմամարդ տեղ մը քու բնա-

կութիւնդ հաստատես որպէս զի՛ պարկեշտ ընկերութեանց յետ յարարերութիւն ունենալով՝ այդ ցաւալի և յուսահատական կեանքէդ ազատիս. զի այս է ատոր միակ դարմանը:

47

Զուարճութեանցդ և զբոսանաց չափն անցուցէր ես, և քու այս ընթացքիդ համար ճշմարիտ բարեկամներդ ու ընտանիքդ դժգոհ են, և եթէ դուն զուարճութեանց համար ինքը զինքդ այս աստիճան չը զոհէիր, նշանաւոր մէկը պիտ' ըլլայիր. զի մեծ բաղդաւորութիւն ունիս քու կենացդ մէջ:


Լաւ ու խելացիութիւն կրնես եթէ հեռի կենաս այդ տեսակ զբոսանքէն որ զմարդն ՚ի կորուստ կը դատապարտէ, և գինովի պէս կրնէ:

48

Ի մօտակայս մեծ բարութիւն մը պիտի ժամանի քեզ, և քու վիճակդ խիստ լաւ պիտ'


ըլլայ, քաջութիւն ունեցիր որ յ'անակնկալ գալստեան բարւոյն չ'ըշուարիս : Քու վիճակըդ քիչ ժամանակի մէջ պիտ' այլափոխի և դուն ընտանեօք հանդերձ խիստ երջանիկ պիտ' ըլլաս :

Իրա՛ւ, եօթն անգամ բաղդը մոտեցաւ քեզի և շուտով հեռացաւ, բայց այս անգամուն գալուստը փառաւոր պիտ' ըլլայ և անոր ընկերութիւնը տեւողական :



49

Ինն անգամ մեծ վտանգէ ու փորձանքէ ազատեր ես, զի անխոհեմութեան մէջ վերջին ծայրն հասած ես, ծնունդդ և սիրտդ բարի է, բայց ի՛նչ օգուտ որ կրթութիւնն ու ուսմունքը կը պակսին քեզնէ : Եթէ տակաւին այդ պակասութիւններով մնաս, զանազան վտանգներ ու փորձանքներ անպակաս պիտ' ըլլան քու անխոհեմ վարմունքիդ պատճառաւ : Ի՛նչ ըսեմ՝ չարն ու բարին քու ձեռքդ է : Կուզես կուզես փրկուէ կուզես կորսուէ :



50

Այնպիսի բնաւորութիւն մ'ունիս որ ի՛նչ ըլլալը չես գիտեր ու չես զգար : Դուն լաւ կարծեր ես, բայց շատ մարդու ալ հաճելի չ'ըթուիր : Իրաւ ոմանց աղէկութիւն կրնես և ըրած բարութիւնդ ալ մարդ չ'իմանայ կըսես, բայց նախ դու կը հասկցնես ուրիշին քու ըրած բարութիւնդ, և ասով քու ըրած բարութիւնդ ստակ մը չ'արժէր. քանզի դուն փառաւորութեամբ համար ուրիշին պատիւն արատարած կը սեպուիս, զի հրապարակաւ բարութիւն մ'ընելը չարութիւն գործել է :



51

Մէկ քանի լուացողներու յարաբերութիւն ունենալուդ համար սիրտդ և բնաւորութիւնդ զզուելի եղած է, դուն այս ընթացքով պիտի թշուառանաս և ցաւալի վիճակի մէջ պիտի մեռնիս եթէ շուտով լուացողներու հետ յարաբերութիւնդ չ'ըդադրեցնես և ընթացքդ ՚ի բարին և ՚ի հաճոյն չ'ը փոխես : Եթէ ծանր կը թուի, տեղդ փոխէ և շուտով կրնաս ընել :





52

Վարքդ փափուկ և քաղաքավար չէ՛, և ցաւալին սա է որ բարի և հաճելի վարք մ'ունեննալուդ պէտքը չէ՛ս գդար և ինքը զինքդ կրթեալ անձի մը տեղ դրած ես. և եթէ տեսնես փափուկ վարքով և քաղաքավար մէկը, չէ՛ւէ՛ է կըսես: Ասի քու անկրթութեանդ մէկ մեծ ապացոյցն է:

Դուն քու այդ կոչտ ու ցուրտ վարքովդ քեզի ժամանած մէկ քանի բարդի յաջողութեաները ոտնակոխ բրիր, և ինչ ներդուծիւն որ կը կրես հիմայ, անի քու անքաղաքավար ու կոչտ վարուցդ պտուղն է: Մի՛ տնտնար նայէ՛ որ շուտով աճուուիս ու ըստ արժանոյն կրթուիս: Զէ՛ւէ՛նէ հոգ չէ՛ բաւական է որ անգամ մը կոչտութիւնը վրայէդ երթայ, և այնուհետեւ զէ՛վզէ՛ կուծիւնն ալ կուղղուի:




53

Ըստ արժանոյն ընտանեւէր ըլլալուդ համար կը գովեմ՝ գքեզ, բայց կը խրատեմ միանգամայն որ քիչ մը ծանրաբարոյ ըլլաս և հաստատամիտ քու առեւտրական և ընտանեկան գործոցդ որոշմանցը մէջ: Թէեւ ամէն

228  
1934

54

բանի մէջ հաստատամտութիւնը մարդկային յառաջադիմութեան արդեւք է, սակայն որ և է որոշում մը հաստատամտութեամբ գործադրութիւն կը պահանջէ նիւթական վիճակդ գոհացուցիչ չէ՛ և ատոր պատճառն ալ քու այդ փոփոխամիտ բնաւորութիւնդ է. լաւ կընես եթէ ինքը զինքդ ուղղես:



Ընտանիքդ քեզնէ բնաւ գոհ չէ՛ զի ցուրտ կերպով կը վարուիս կամ՝ լաւ եւս իբրեւ բռնաւոր մը կը ներկայանաս տանդ մէջ. այս ալ կրթութեան և սւտման պակասութենէն յառաջ կուգայ: Տանդ մէջ գրեթէ ամեն օր գանդատ և խռովութիւն կը տեսնուի, և դուն բնաւ հանդիստ չունիս, անվայել միջոցներ կը խորհիս երբեմն որոնք գազանային և անասնային կենաց աւելի կը պատկանին: Քու ընտանիքդ հետզհետէ քեզնէ պիտի պաղի և քու կորուստդ անոնց հաճելի պիտ' ըլլայ, եթէ չը փութաս անոնց սէրը գրաւեբու:

Քու այդ անհաճոյ վարմունքդ և անասնային ընթացքդ և անբարոյական դաղտնի գործքերդ զքեզ շուտով պիտի թշուառացնէ և մերամաղձոտ մէկը պիտ' ըլլաս՝ և ահա՛ յայնժամ պիտի կորսուիս:

55

Սիրտդ մաքուր է բայց շատ փոփոխամիտ ես, և այդ փոփոխամտութեանդ պատճառաւ վեց անգամ բաղդի յաշոյղուածն եկեր է քեզի և շուտով հեռացեր է : Տակաւին չորս բաղդունիս ապագայիդ մէջ որոնք հետոյհետէ մեծ են, պէտք է ուրեմն հաստատամտութիւն ունենաս կարեւոր դործոյ մէջ որպէս զի կարենաս զանոնք վայելել : Գիտեմ, սիրտդ նեղ է և համբերութիւնդ սակաւ, բայց քիչ մը լայն սիրտ ունենալու վարժութիւնն ընելու ես քու ապագայիդ երջանկութեանն համար, երեք անձանց հասուցած բարիքդ քու ապագայ բարօրութեանդ պատճառ պիտ' ըլլայ :



56

Բնութիւնդ լաւ ու ընտիր է բայց քիչ մը ծուլութիւն ունենալուդ համար շատ բարիքներէ ետ կը մնաս : վասն զի եթէ այդ բարիքնաւորութեամբդ աշխոյժ և ճարպիկ ըլլայիր, իրաւ կըսեմ որ նշանաւոր մէկը պիտ' ըլլայիր : Շատ պարագաներու մէջ անհոգութիւն կընես և թոյլ կը կենաս : Շուտ ըրէ՛ առանց տընտընալու ինքը զինքդ թոթուէ և աշխոյժութիւն զգեցի՛ր ամեն պարագայի մէջ զի մեծ

բաղդ մը քեզի պիտի մօտենայ 'ի սակաւ աւուրց և շատ երջանիկ պիտ' ըլլաս :



57

Նեղ սիրտ ես և միանգամայն շատ վախկոտ, և այն բնաւորութիւնդ քու յառաջագիւմութեանդ մեծ արգելք եղած է : Բաղդի շատ յաշոյղուածներ եկեր մօտեցեր են քեզի, բայց վախկոտ և նեղ սիրտ բնաւորութեամբդ յարգմը չեն գտեր քու քովդ : Երանի՛ թէ այդ վախկոտութիւնդ շուտով մէկդի նէտէիր և քաջութիւն ձեռք առնէիր, որպէս զի ընտանեօքդ հանդերձ երջանիկ ըլլայիր քիչ ժամանակի մէջ, բայց սա ալ գիտեմ որ եղած տեղդ դժուար պիտ' ըլլայ այդ վախկոտութենէդ ազատին, ասոր համար խորհուրդ կուտամ որ բնակութեանդ տեղը փոխես և գովելի ընկերութեանց հետ յարաբերութիւններ ունենաս այն ատեն դիւրաւ կը սրտոտիս :



58

Բնաւորութիւնդ հանդարտ է և միշտ կը խորհիս, բայց ի՛նչ օգուտ որ այդ խորհրդածութենէդ արդիւնք մը չ'ը գոյանար, զի մէկ

նիւթի մը վրայ ամենայն զօրութեամբ և կանոնաւորապէս չես խորհիր, պակասութիւն մ'ալ ունիս որ աւելի անցելոյն վրայ կը խորհիս քան թէ ապագային : Եւ անցելոյն վրայ ընդարձակ հաշիւներ կ'ընես և երեւակայութեանդ մէջ գործ մը կ'երականացնես : Ըսել կուզեմ որ անդին ժամանակդ փուճ տեղը կը վատնես առանց արդիւնք մը գոյացնելու : քու խորհրդածութիւններդ գէշ չ'են, եթէ զանոնք կանոնաւոր եղանակի վերածես և ներկայիդ ու ապագիդ վրայ մտածես և որոշում մը տաս, և զկնի որոշմանդ ուրիշին խորհրդովն այդ որոշումդ չ'ը փոխես, զի բազում քեզի պիտի յաջողէ չ'ըլլայ որ ուրիշին կարծիքովն ու խորհրդովը քու կարծիքդ փոխուի և ունեցած քաղդի յաջողուած քեզ զրկուի :

59

Դուն նշանաւոր մէկը պիտ' ըլլաս բայց կըրթութեան և ուսման մէջ պակասութիւն ունիս եթէ այդ պակասութիւնները չուտով լրացնել ջանաս, ընտանեացդ փառացն ու երջանկութեանը պատճառ պիտ' ըլլաս : Լաւ կ'ընես եթէ գործդ գիտնաս, այսինքն ծախքդ չափաւորես բայց չէ թէ տունդ և ընտանիքդ նեղես, այլ թէ չափէն և օրէնքէն աւելի ծախք

չընես : Գիտեմ շատ ընտանեակներ ես, բայց ընտանեացդ բարօրութեանն ու կրթութեանն համար կարեւոր եղածները պէտք է 'ի գործ դնես : Երկու մեծ բաղդեր պիտի մտտենան քեզի քիչ ժամանակի մէջ, պատրաստ կեցիր զանոնք արժանաւորապէս հիւրընկալելու :



60

Քեզի պէս բազմաւոր մը հազիւ թէ քսան հազարէն մէկ մը կ'ընայ ըլլալ, բայց կը զարմանամ թէ ինչո՞ւ համար գործոցդ և աշխատութեանցդ մէջ կը թանդաղիս և կը ծուլանաս : Իրա՛ւ կըսեմ որ եթէ քիչ մ'աշխոյժ և ճարպիկ ըլլայիր, և ուսման մէջ աշխատէիր խիստ հարուստ և երեւելի անձ մը պիտ' ըլլայիր : Շուտ ըրէ՛ աշխատէ՛ ամենայն արթնութեամբ և ճարպիկութեամբ և ուսմունք ա՛ռ բաղդն հեռի չէ և մեծ է կարծածէդ աւելի : Խորհուրդ կուտամ քեզի որ վարքդ աւելի եւս փափկացնես և քաղցրաբարոյ և քաղցրախօս ըլլաս ըստ կարելոյն :



61

Կրթութենէ քիչ մը հեռի կը տեսնեմ ըզքեզ, միջոց ալ ունիս աճուուելու և փափուկ

ու հաճելի վարք մ'ունենալու , բայց անփոյթ կը կենաս : Նանա՛ օրերդ պարապը մի՛ անցուներ և մարդկային ընկերութեանց հետ յաճախ յարաբերութիւն ունեցի՛ր որպէս զի՛ կրթութեան մէջ ունեցած պակասութիւններդ լրացունես , ծուլութիւն ալ ունիս , այն ալ այս եղանակաւ վրայէդ թոթուես , զի մարդկային արարած մ'ըսելը աշխատութիւն ըսել է :

Ուսմունքը , կրթութիւնն ու աշխատութիւնը զմարդն ՚ի գերութենէ կը փրկեն և բաղդն ալ կրթեալին և աշխատողին աւելի կը մօտենայ :




62

Շատախօս ես և միանգամայն դատարկախօս , խօսածներուդ մէջ բնաւ իմաստ մը չըլլալէն զատ՝ հակախօսութեանց մէջ մոլորուած ես : Մէկ խօսքդ միւսին չ'ը յարմարի :

Այդպիսիք բնականաբար զէվզէկ կըլլան , դուն թէեւ զէվզէկ չես , բայց ինքը զինքիդ շատ հաւնած մեծ անձն չարասիրտ մ'ես : Նիւթական նեղութիւնը թէեւ երբեմն զմարդը կը կրթէ և շատ անգամ ալ գթասիրտ և բարեսիրտ կընէ , սակայն քու բնաւորութիւնըդ ու ընթացքդ ատոր հակառակն է : Յաւալի է որ քու այդ վիճակիդ մէջ յ'ապագայս

ունեցած երկու բաղդերդ քեզի չ'ը մօտենան , զի այդ սրանեղուկ և ձանձրացուցիչ վարմունքովդ չ'ը պիտի կարենաս զանոնք հիւրընկալել , շուտ ըրէ փոխէ վարքդ ու ընթացքդ մեղք ես . կը ցաւիմ՝ քու ընտանեացդ վրայ շատախօսութիւնն ու դատարկախօսութիւնը մէկդի դի՛ր , քեզի չ'ը վերաբերած գործին մէջ մի՛ նետուիր և ուշադրութիւն ըրէ կըրթեալ և ուսեալ անձանց վարուց և խօսից որպէս զի այդ ցաւալի ախտէն բժշկուիս :



63

Ենունդդ շատ բաղդաւոր է , բայց արեան շրջանդ խիստ շատ անգամներ անկանոնութեան մէջ մտնելով՝ բաղդերուդ պտուղը գրեթէ չես կրցէր վայելել : Կարելի եղածին չափ քաղցր ու քաղաքավարօրէն խօսէ ամեն ուրեք , ու ամեն պարագայի մէջ , կուոց և վիճաբանութեանց մէջն անգամ՝ զի՛ այս եղանակը քու բաղդիդ ճամբաները կը պատրաստէ կը յարդարէ և կը շքեղացնէ :

Ամենեւին չ'ըլլայ որ բարձրաձայն խօսիս մէկու մը հետ՝ ո՛վ որ ալ կամ ո՛ւր որ ալ ըլլայ , զի բարձրաձայն խօսելը քու բաղդերուդ ճանբաները կը գոցէ կամ կը վտանդէ : Այլ միշտ ցած ու մեղմաբար խօսէ :


Աչքերը մեծ ու բաց մարդոց հետ սերտ  
 յարաբերութիւն մի՛ ընէր զի՛ այնպիսի աչք  
 ունեցողին արիւնը՝ քու արեանդ հետ բնաւ  
 չ'ը համաձայնիր : Երկու անգամ՝ մեծ՝ և հինգ  
 անգամ՝ ալ փոքր բաղդերուդ յարզն այս  
 պատճառաւ չ'ես գիտցեր և անոնց ապարդիւն  
 հեռանալուն պատճառ ես եղէր : Այսուհետեւ  
 իրարու ետեւէ յաջորդող երեք բաղդեր ու-  
 նիս ապագայիդ մէջ . որոնց երկուքը նշանա-  
 ւոր են՝ նայէ՛ և զգուշացի՛ր որ արիւնդ ա-  
 պականեալ վիճակի մէջ չ'ը գտնուի , որպէս  
 զի զանոնք կատարելապէս վայելես :



64

Վարպետորդի մարդոց խօսքերուն շատ կը  
 խաբուիս , թէեւ անխելք մարդ չ'ես : Փոքր  
 պակասութիւն մ'ունիս որ մէկ բանի մը վրայ  
 առանձին և քիչ մ'ալ երկար չ'ես խորհիր :  
 Բարեկամաբար խորհուրդ տամ քեզ , թէ որ  
 և է որոշում մէկէն 'ի մէկ մ'ընէր , այլ եթէ  
 բան մը կուզես ընել կամ մէկու մը առաջար-  
 կութեանը պատասխանել , նախ առանձին տեղ  
 մը քաշուէ և այն խնդրոյն վրայ մէկ քառորդ  
 միջոցի չափ լաւ մը խորհէ մտածէ՛ և այնուհե-  
 տեւ որոշէ՛ . և զինի որոշման ալ չ'ըլլայ թէ ո-

բողումդ փոխես որպէս զի չ'ի վնասիս : Քու կե-  
 նաց շրջանիդ մէջ առատ բաղդեր ունիս , ե-  
 թէ տուած խորհուրդս որ քեզի համար լաւ է ,  
 ուշադրութեամբ և կատարելապէս դործադ-  
 րելու ըլլաս , դալիք բաղդերէդ շարունակ  
 մեծամեծ օգուտներ պիտի քաղես : Զգոյշ կե-  
 ցի՛ր ձայնը բարակ կամ սուր անձանց հետ  
 ստեպ յարաբերութիւն ընելէ . զի այսպիսեաց  
 արիւնը քու արեանդ հետ չ'ը համաձայնիր :



65

Թէեւ դուն չ'ես զգար , բայց ես զիտեմ  
 որ՝ քու ներկայ ընթացքդ անվայել և քեզի՛  
 ու քու անձիդ ալ վնասակար է : Քու արիւնդ  
 շատ ժամանակէ 'ի վեր , ապականեալ վիճակի  
 մէջ ըլլալուն համար , զանի շուտով մաքրել  
 պէտք է , քանզի 'ի մտտակայս մեծ բաղդ մ'ու-  
 նիս որ ճամբայ ելած է առ քեզ մերձենալու  
 համար , չ'ըլլայ որ քու արեանդ անմաքրու-  
 թեամբը զանի փախցնես :

Իիպուածն այնպէս բերած է որ ժամանա-  
 կաւ մէկու մը բարութիւնդ հասած է . ահա՛  
 այս պատճառաւ դուն մեծ վտանգէ մը վերը-  
 կուեցար . ասկէց զատ՝ մէկ քանի փոքր վը-  
 տանդներ ալ անցուցած ես , քու յոռի ըն-  
 թացիցդ պատճառաւ : Քու բարութիւնդ ու

Թշուառութիւնդ քու ձեռքդ է եթէ չ'ը մաքրուիս պիտի թշուառանաս : Շուտով դանի ըրէ՛, աշխատէ՛ որ ընթացքդ հաճելի և դովելի ըլլայ :



66

Ինքը զինքդ բանիբուն , գործունեայ և հանճարեղ կը կարծես և ուրիշին ալ չ'ես հաւնիր , սակայն մեծապէս կը սխալիս . զի՛ դքեղ պղծութիւնդ տանող և ծարաւ ետ դարցնող շատ կան : Քու քովդ մասնաւոր ամբարտաւանութիւն մ'ալ կայ , որ քու կրթութեանդ ու յառաջդիմութեան մեծ արդեւք եղած է : Եթէ հանդարտ մտօք ինքը զինքդ լաւ մը կըշուես , լաւ պիտի համոզուիս որ պարապ մարդ ես :

Ինքը զինքդ ուղղելու և կրթելու համար , նախ որոշէ՛ ու համոզուէ՛ որ դրեթէ՛ բնաւ բան մը չ'ես գիտեր , ասանկով ահա՛ ամբարտաւանութիւնդ կը խորտակի , և այնուհետեւ ամենուն խօսածն ուշադրութեամբ մտիկ կընես , և անոնցմէ քեզի դաս մը , օգուտ մը կը քաղես :

Յու այս բնաւորութեան պատճառաւդ երբ մեծամեծ բաղձերէ զրկուեցար : Ունիս

գարձեալ երկու մեծ ու նշանաւոր բողոքեր , բայց զանոնք կատարելապէս ընդունելու համար պէտք է անձդ նախապատրաստես , ապա թէ ոչ՝ վիճակդ ցաւալի կըլլայ :



67

Բնաւորութիւն մ'ունիս որ ամեն բան գիտեմ կըսես , և մեծամեծ սխալանաց մէջ կ'ընկնես : Եւ ասոր համար շատ անգամ ուրիշներուն քով յարգ չ'ես ունեցած , և որ առաւելըն է ծիծաղելի ալ եղած ես : Բարկասրտութիւնդ օր ըստ օրէ աւելնալու վրայ է : Ասի քու կենացդ մեծ փնաս պիտի պատճառէ և քու բաղդիդ դռները պիտի գոցէ , ուստի՛ առանց ժամանակ անցնելու բնաւորութիւնդ փոխելու և չափաւորելու աշխատէ , զի քու ծնունդդ շատ բաղդաւոր է : Այսինքն՝ քեզի համար մեծ բարութիւններ կան յ'ապագայդ , չ'ըլլայ որ զանոնք չ'ը կարենաս կատարելապէս հիւրընկալել :

Կեղծաւորութիւնը տեսակ մը քաղաքաւարութիւն ըլլալով՝ եթէ անոր միջակ ճամբան գործածես , այս եղանակը քեզի համար լաւ է :



Քեզի պէս բազմաւոր անձ մը 10,000 ին մէջ հազիւ մէկ մը կը գտնուի . բայց ցաւալին սա է որ կրթութեան և ուսման մէջ ունեցած պակասութեանց պատճառաւ՝ այդ շատ մը բազմաթիւ միշտ քու շուրջը կը պատին բայց չեն կրնար մտնել :

Ժամանակէ մ'ի վեր է որ երակներուդ մէջ արեանդ շրջանը ծանրացած է , աս ալ մեծ պատճառ մ'է քու բազդերուդ քեզմէ հեռի պտտելուն . ուստի՝ նայէ՛ որ ժամ մը յառաջ քու արեանդ շրջանը դիւրացնես և թեթեւցընես , և որչափ ալ կարելի է հոգ ու փոյթ տանիս ժամ յառաջ կրթութեանդ ու ուսմանդ : Ձանա՛ որ չ'ը թմրիս ու արթուն ըլլաս աշխարհիս դարձուածոց մէջ , և անոնցմէ տեղեկութիւն և հմտութիւն ունենաս , որպէս զի՝ շատ մը բազդերդ արժանաւորապէս վայելէս :

Ժամանակէ մ'ի վեր է որ դործդ անյաջողութեան մէջ ըլլալով՝ զանազան մտածմունքներով անդադար կ'ըբաղիս : Գիտեմ՝ , մէկ բանի տարբեր միջոցներ խորհեցար և դործսդ-

ընցի՛ր , բայց անոնք ալ յաջող ելք մը չունեցան : Ինչո՞ւ համար զուր տեղը կը մտատանջիս , և գեղեցիկ օրերն ու ժամանակը ապարդիւն կանցնես : Չ'ես գիտեր որ քու արիւնդ չափէն աւելի ջրոտեր է : Եւ այն աստիճանին հասեր է , որ ամէն բան քեզի ձանձրոյթ կը պատճառէ : Գրեթէ և ո՛չ բանէ մը գուարճութիւն կ'ըգաս , մէկու մը ներկայանալ հարկ է , ու չ'ես ուզեր երթալ , վրադ թուլութիւն մը տիրած է , ու այս կերպով ի՛նչ ընելուդ մէջ գրեթէ շուարած ես : Քու այս վիճակիդ բարւոքմանը համար ամբողջ մէկ ամիս ծովային և ցամաքային ճանքորթութեամբ օգափոխութիւն պէտք է որպէս զի՝ նոր զօրաւոր և աշխոյժ մէկ մ'ըլլաս . որպէս զի՝ դալիք բազդերդ լաւ մը գրկես , զի՝ բաւական թուով բազդեր ունիս : Ա՛լ մի՛ տնտնար , փութացի՛ր :

Քու կենացդ մէջ շատ աղեկ դարձուածքի և բարիքներու հանդիպեր ես . բայց երկու շարամիտ անձանց գէշ խորհուրդներովը հիմայ գրեթէ դրկուեր ես : Քու խորհածդ ու որոշածներդ շիտակն ըսելու համար գէշ չեն եղեր , աղէկ բաներ ու լաւ կերպեր ու եղա-


նակներ խորհեր ես : Բայց ինչ օգուտ որ ուրիշին խորհրդոցը զոհուեր ես : Ճանբաղ մի փոխեր , քու խելքդ քեզի բաւական կրնաս դուն ինքը դինքդ կառավարել առանց ուրիշին խորհրդոցը կարօտելու : Միայն թէ կրթութեան եղանակդ կատարելագործէ , և քաղցրը ու կարճ խօսելու կերպը քեզի ընտրէ , այն ատեն բոլորտիքդ թրչաող բաղդերդ քեզի շուտով կը մօտենան : Եւ ամեն մարդ ալ պիտի զարմանայ և ուրախանայ քու ապագայ գեղեցիկ վիճակիդ վրայ :



71

Մարդկային ընկերութեան նախատինք բերող բնաւորութեան տէր մէկն ես , և այս պատճառաւ շատ կը վախնամ որ քու ապագադ ցաւալի պիտ' ըլլայ եթէ ինձ մտիկ կ'ընես : Առանձին տեղ մը փակուէ' և ուխտ ըրէ' որ այդ բնաւորութիւնդ ազտոտ շապիկի մը պէս թոթուես ու վրայէդ նետես : Գու բաղդաւորութիւնդ գրէթէ շատ մարդու վրայ չ'ը գտնուիր և եթէ այդ յոռի բնաւորութիւնը չունենայիր , դուն նշանաւոր ու երեւելի մէկը պիտ' ըլլայիր , զի բաւական ալ հանճարեղ ես և խելքդ սուր :

Չուր տեղը զո՞հ եղեր ես քու կրից հաճօքիցդ և տտր համար քու երջանկութիւնդ ու վայելչութիւնդ կամաւ իտանակոխ ես ըրեր : Մի' տնտնար խորտակէ կիրքդ որպէս զի երջանկութիւն և վայելչութիւն ստանաս :



72

Մինչեւ ցարդ 7 փորձանք անցեր են քու վրայէդ և ամեց ամենուն ալ համբերեր ես , բայց պակասութիւն մ'ունիս որ ժիր ու ճարպիկ չ'ես : Գիտեմ որ ժամանակաւ ժիր ու ճարպիկէիր , բայց վճատելով հետզհետէ թուլցար , և այս պատճառաւ չ'ը կրցիր վերականգնել : Գու ապագայիդ մէջ 4 մեծ բաղդեր ունիս , եթէ չ'ը զօրանաս ու ժրութիւնդ չ'ը վերագրիկես գէշ կրնես , զի երբ բաղդերը քեզի մօտենան ու գքեզ թոյլ գտնեն շուտով կը փախչին : Լաւ կրնես եթէ աջ կամ ձախ թեւիդ երակէն 40 տրամի չափ արիւն հանել տաս , երեք օր սենեակիդ մէջ փակուիս հանգիստ ընես , և անմիջապէս ետքն ալ փոքրիկ ճամբորդութիւններ ընես միայն ծովային : Հաստատ գիտցիր որ միայն 10 օր կարճ կարճ ծովային ճանբորդութեամբ նոր զօրութիւն մը պիտ' զգենուս , և նոր ու ճարպիկ մէկ մը պիտ' :



ըլլաս, քու բաղդերդ արժանաւորապէս և կատարելապէս գրկելու համար: Զդուչացիք միայն խիստ դեղին մագերով և կապուտ աչքերով անձանց հետ յարաբերութիւն ընելէ՝ զի՛ այսպիսեաց արիւնդ քու արեանդ չ'ը համապատասխաներ:



Մարդկային պարտաւորութիւններդ չ'ը ճանչցող ու չ'ը յարգող մէկն ես, երկիւղածութիւն ու պատկառանքն ալ որ կը թութեան շրջանին մէջ քող մը կը սեպուին, անոր ալ հետը հետէ վրայէդ հեռանալ սկսած են, և ահա՛ այս պատճառաւ՝ երջանկութեան ճանրէն խոտորեր ես: Շատ կը վախնամ՝ որ այս ընթացքդ եթէ մէկ տարի ալ շարունակի, տարակոյս չ'կայ որ վիճակդ վատթարագոյն պիտո՛ր ըլլայ և անոր առաջքն տունելու դարմանն ալ դժուարագոյն: Մէկ քանի պակասութիւններ ալ ունիս որ հոս կ'ամէնամ քեզի ըսելու, դուն լաւ գիտես, մտածէ՛ ու այդ պակասութիւններէն զգոյշ կեցի՛ր, փութա՛ կը թական եղանակդ ՚ի բարին վերածելու, զի՛ անբաղդ մէկը չ'ես, և կրնաս քու բաղդիդ արդիւնքն ամբողջապէս վայելել:

Կարծես թէ՛ վրադ խիստ ծանր բեռ մը կայ, և այդ բեռան ծանրութիւնն հետզհետէ աւելի եւս պիտո՛ր զգաս: Յ'արդ երեք անգամ բաղդի դունք բացուեցան ու շուտով դոցուեցան. զի՛ արիւնդ վերջին ծայր թանձրացեր է: Մէկու մը բան մը պատմած կամ յայտնած ժամանակդ դիմացինիդ անախորժ կամ անըմբռնելի կը թուի զի՛ արեանդ յարաբերական ուժը խիստ տկարացած է: Շատ դէշ կ'ընես եթէ տակաւին այդ թուլացեալ ու ծանրացեալ վիճակիդ մէջ սնանիս: Փութացի՛ր դնա՛ ՚ի տաք բաղանիս, և մարմինդ շատ մը կակըղնայու աստիճան քրտնելէդ ետքը երկու օրինքը զինքդ պահպանէ ՚ի խոնաւութենէ և ՚ի ցրտոյ և երրորդ օրը մարմնոյդ մեծ երակները շիւել տալով 50 տրամի չափ արիւն հանել տուր և երեք օր հանդչէ՛ առանց արիւնաւեր ուտելիք կամ ըմպելիք դորձածելու. այս դորձողութենէն ետքը 15 աւուր չափ ծովային և ջամաքային ճանրորդութիւն ըրէ՛, պիտի տեսնես որ շուտով վիճակդ փոխուած է ՚ի յաջողութիւն և դայիք չորս բաղդերդ այն ատեն լաւագոյն կերպով պիտի կրնաս գրկել:



Ատեն ունիս որ զուարդ ես, և ատեն ալ ունիս որ կը տխրիս : Փոքր բանէ մը կուրախանաս, փոքր բանէ մ'ալ կը վշտանաս և կը խորուրիս : Երբեմն աշխարհս քեզի սքանչելի կերեւնայ, և երբեմն ալ կարծես կը մթննայ և քեզի այնպէս կը թուի, որ մարդկային ամէն ջանք անօգուտ ու ասպարդիւն են այս աշխարհիս մէջ : Ասոնք խառնուածքի և արեան ապականութենէ յառաջ եկած շոշորդներ են : Ասի այսպէս թողուլ չ'ըլլար. զի՛ քանի՛ որ հիննայ ու քանի՛ որ հասակաւորիս, այս վիճակը կը ծանրնայ քու վրադ : Ասոր համար, խոհեմութիւն և խելացութիւն մը կընես եթէ 15 օրեայ ծովային օդափոխութիւն մը շուտով 'ի գործ դնես, զի՛ բազմ մ'ունիս 'ի մօտակայս և 'երկուք ալ յաջորդաբար, բայց այս վերջինները մէկ տարի ետքը պիտի մոտենանքեղ :



Քեզ տեսնողը, կամ քու վրադ ուշադրութիւն ընողն այնպէս կը կարծէ որ շատ կը խորհիս, և այդ կերպ խորհելովդ օգտակար ծրարիւններ կը պատրաստես. բայց այս կարծիքը

սխալ է : զի՛ խորհելու եղանակդ աղաւաղեալ է : Ամէն ժամանակ բանի մը խորհիմ կըսես, և խելքդ ասդին անդին կը ցրուի, և խորհուրդըդ կը խափանի, ըսել կուզեմ թէ՛ նոյն միջոցին տեսակ մը մշուշ, «ուշուշ» կուզայ վրադ և մտածմունքդ աստանդելով խորհուրդիդ ծրարագիրը տակնուվրայ կընէ : Ասոր միայն ճարմը կայ որ պէտքէ գործադրես առանց ուշացնելու : Առտու մը կանուխ գնա՛ քիչ մը հեռու, ականջդ բողբոջիլն խաղաղ ու օգուտ տեղ մը քաշուէ՛, և 10 վարկեանի չափ երեսդ ու գլխաւորաբար ճակատդ պաղջրով լաւ մը թրջէ, ու սրբուէ՛ և նախաճաշիկ մ'ընելէդ ետքը առանց աչքդ ասդին անդին պտտցնելու, նոյն նիւթին վրայ կարծորէն խորհէ՛ ու անմիջապէս որոյէ՛ և առանց տնտնալու զանի անմիջապէս գործադրել փութայ, ահա՛ այն ատեն բազդդ քեզի պիտի մօտենայ :



Ճարպիկ ու գործունենայ անձ մը կ'երեւիս, բայց փոփոխամիտ բնաւորութեան տէր մէկն ըլլալուդ համար, գործերէդ ց'արդ արժանաւոր օգուտ մը չ'ես կրցեր քաղել : Վախկոտ թոյնոց պէս՝ ծառոց մէկ ոտէն միւսին կը

վրայէդ գրեթէ հոփի պէս անյաճ տասնի չափ  
ցատկես : Այս պատճառաւ ցաւալի է որ քու  
գեղեցիկ բաղդերդ չ'ես կրցեր գրկել, և ա-  
նոնց յարդը ճանչել :

Ուստի՛ լաւ կընես եթէ աջ կամ ձախ թե-  
ւի երակէդ 30 տրամի չափ արիւն հանես և  
4-5 օր հանգչիս , զի այնչափ մը վնասակար ար-  
իւն կայ վրադ որ քու երջանկութեանդ առջև  
պատնէշ մ'եղած է : Տարակոյս չ'ը կայ որ ա-  
սանկով քու փոփոխամիտ բնաւորութիւնդ պի-  
տի փոխուի : Եւ որոշած մէկ գործդ անմիջա-  
պէս գործադրելու պիտ' ելնես , Եւ ահա այ-  
նուհետեւ պիտ' սկսիս սպազայ 6 բաղդերդ  
վայելել :



Շնչոցի մը մէջ կը տեսնեմ գրեզ , այն աս-  
տիճան մեծ , որ ինչ վիճակի մէջ ըլլալդ դուն  
անգամ լաւ մը չ'ես գիտեր : Գտնուած վիճա-  
կիդ միշտ աղէկ կողմը կը տեսնես , և զայն  
տեսնել կուղես : Բնաւ ձախող կողմը չ'ես մը-  
տածեր , քանզի՛ այնպիսի վիճակ մ'ունիս որ  
այն կողմը մտածել տալու միջոց չ'ը կայ գրե-  
թէ : Ամեն բան շքեզ և լուսաւոր կը տեսնես ,  
և պարագաները քեզի այնպէս կը կարծեցնեն

որ այս լուսաւոր շնկոցը տեւողական և յա-  
ւիտեանական է :

Առ այժմ , երակներուդ մէջ արիւնը լաւ  
շրջան կընէ , ուստի՛ սէտք է որ զգուշանաս  
այս գեղեցիկ շրջանը խանգարող ուտելիք ըմ-  
պելիք եւ այլն բաներէ , զի՛ չ'ըլլայ որ շրջանը  
ծանրանայ , և վիճակդ կ'երպարանափոխուի :  
Լաւ կընես , եթէ երկու ժամ միայն առանձ-  
նանալով քու ներկայ վիճակդ ու անոր ըն-  
թացքն հաշուեկշռելով սպազայ օգտիդ ծը-  
րագիրը ներկայէն հիմակուց պատրաստես :




Քու վիճակդ մինչեւ ց'արդ չորս անգամ  
կերպարանափոխ եղած է սէտք եղածին չափ  
խորագէտ ես և կընաս աւելի եւս գործեր ըստ  
ինքեան տնօրինել , կարգադրել և կառավա-  
րել : Քու անձիդ և վիճակիդ երկիւղը միմիայն  
ցրտէն և խոնաւութենէն է : Պէտք է որ միշտ  
զգուշանաս ցրտային և խոնաւային պատահար-  
ներէ , զի մի՛ վատթար վիճակ մ'ունենաս :  
Խիտտ սեւ մազերով անձանց հետ յարաբերու-  
թիւն մի՛ ընէր , զի՛ այսպիսեաց արիւնը քու  
արեանդ հետ բնաւ չ'ը համաձայնիր : Երեք  
բաղդ ունիս սպազայիդ մէջ , եթէ կանոնա-

ւորապէս վարուիս պիտի կրնաս շանոնք ար-  
ժանաւորապէս վայելել :



80

Դուսաւոր աստեղ տակ ծնած մէկն ես ,  
բայց նախապաշարմանց մէջ սնեալ ըլլալուդ  
համար , բաղդիդ մեծամեծ առիթները կոր-  
սընցուցեր ես : Քու բաղդերդ գրեթէ անթիւ  
են քեզի համար , բայց մեզք որ այս նախա-  
պաշարմունքներէն ազատուելու և լաւագոյն  
եղանակաւ բաղդաւորուելու համար , պէտք է  
որ դոնէ 3-4 ամիս բաղմամարդ ու մարդկա-  
յին զանազան տեսակ դովելի ընկերութիւն-  
ներ գտնուած տեղերուն մէջ կեանք վարես և  
բստ այնմ մեծ ուշադրութեամբ լաւ մը կըր-  
թուիս :



81

Ներսդ սեւ՝ ու դուրսդ ճերմակ մէկն ես ,  
այսինքն քեզ տեսնողը բարեպաշտ կարծածին  
պէս՝ դուն ալ դքեզ բարեպաշտ կարծել ու-  
զելով՝ այնպէս եղեր է որ անբարեպաշտութիւ-  
նըդ քեզի զգալի չէ՝ եղած :

Սյուսէս են նաեւ մոլեռանդներն ու ջեր-  
մեռանդները : Լաւ կընես եթէ առանց ինքը  
դինքդ խաբելու , քու ընթացքիդ վրայ հան-  
դարտօրէն ու երկարօրէն դիտողութիւն մ'ը-  
նելէդ վերջը՝ քու համոզմամբդ քու ներկայ  
ընթացքդ դատապարտես : Զի՛ արիւնդ երթա-  
լով թանձրանալու վրայ է , և շատ կը վախոյը-  
ւի , որ եթէ այդ ընթացքդ չ'ը փոխես , վատ-  
թարութիւն մը պիտի տիրապետէ և պիտի  
բռնանայ քու վրայդ , և այնուհետեւ դժուար  
պիտ' ըլլայ անկէ փրկուիլդ : Քու կենացդ չըր-  
ջանին մէջ ունեցած 7 բաղդերէդ 4 ը անցած  
են և կան 3 ալ յ'ապագայս :



82

Արտաքոյ կարգի անձ մ'ես , և այնպէս  
կը կարծես որ քեզի պէս հանճարեղ , քեզի  
պէս բանիբուն մարդ չ'ը կայ , բայց ատի ամ-  
բարտաւանութեանդ և հպարտութեանդ մէկ  
մեծ ապացոյցն է , այդ դէշ սովորութիւնդ  
հեննալով քեզի բնութիւն եղած է . և եթէ եր-  
կու անգամ բաղդերէդ բաղդաւորուեր ես ,  
սակայն ատենէ մ'՝ ի վեր բաղդն հեռացեր է  
քեզմէ , և կը վախոյուի որ հետզհետէ բաղդն  
աւելի եւս հեռանայ քեզմէ : Ուստի լաւ կը

նես որ ապագայ վիճակդ չ'ը վատթարացնե-  
լու և բարեօրքելու համար, մէկ ամիս ծովա-  
յին և ցամաքային ճանքորդութիւն ընես,  
բայց զդուշանաս միանգամայն ողեղէն ըմպե-  
լիքներէ և այնուհետեւ կ'սկսի վարքդ կակաղ-  
նալ և հպարտութիւնդ ու ամբարտաւանու-  
թիւնդ ջախջախել. այն ատեն ահա՛ 3 բաղդե-  
րըդ շուտով պիտի մերձենան քեզի :



83

Լաւ կընես եթէ սիրտդ և բերանդ մաքուր  
պահել ու 'ի մաքրութեան վարժեցնել ջանաս,  
զի՛ սոյս ընթացքովդ շատ մը թշնամիներ յա-  
րուցած ես քեզի պէմ : Լաւ խնայիր որ բա-  
րեկամ կարծածներդ քեզի բարեկամ չ'են ու  
բնաւ քեզմէ չ'են ախորժիր : Արիւնդ կապ-  
ուած ու բռնուած է և ասոր համար դժուար  
է որ քու արիւնդ ուրիշին հետ համաձայնի :

Լաւ կընես եթէ շուտով արիւնդ մաքրես  
և դոնէ 2 ամիս մարդկային ընկերութեանց  
մէջ ժամանակ անցնես, որպէս զի երեք բաղ-  
դերդ արժանաւորապէս գրկել և անոնց յար-  
դը ճանչել :



84

'ի բարեպաշտութենէ 'ի ջերմեռանդութիւն,  
և 'ի ջերմեռանդութենէ 'ի մոլեռանդութիւն  
դիմած ես, և այս պատճառաւ անտանելի մէ-  
կըն ես : Ինքը զինքդ ամենակրթեալ մէկը կը  
կարծես, բայց լաւ գիտցիր որ կրթութենէն  
շատ հեռի կը գտնուիս, մարդկութիւն ըսուած  
բանը բնաւ քու վրադ չ'ը կայ, վերջապէս ինչ  
որ մարդկային ընկերութիւնը կը պահանջէ  
նոյնը վրադ չ'ը կայ : Կը ցաւիմ՝ որ քու այս  
անտանելի վիճակդ ու ընթացքդ ապագային  
մէջ դքեզ պիտի վատթարացնէ և քեզի դա-  
լիք երկու բաղդերդ հովի պէս վրայէդ պիտի  
անցնին, եթէ չ'ը փութաս դարման տանիլ և  
մարդկային ընկերութեան մէջ անանելով չ'ը  
կրթուիս ու քու պակսութիւններդ վրայէդ չ'ը  
թոթուես :



85

Ինքը զինքդ խելացի և գործունեայ մէկը  
կը կարծես բայց շատ կը զխալիս, որովհետեւ  
փոփոխամիտ և շատ չարասիրտ ես. փոփոխա-  
մտութեանդ պատճառաւ թռչնոց պէս մէկ

աստէն միւս աստը կը ցատկեա գործիդ մէջ .  
 յիրաւի շատ բաղդաւոր ես բայց չարասրտու-  
 թեամբդ և ծակաչքութեամբդ քու բաղդե-  
 րը կանոնաւորապէս չ'ես կրնար վայելել : Կը  
 խրատեմ գքերդ ո՛վ մարդ՝ ձգէ՛ ծակաչքութիւ-  
 նը որ ազահութեան մէկ ճիւղն է : սկսէ ազ-  
 գիդ և ընկերիդ աղէկ կամենալ՝ ինչպէս որ  
 քեզի կ'ուզես : Լաւ գիտցիր որ՝ թէ որ մարդ-  
 կային ընկերականութեան պահանջած կանո-  
 նին համեմատ չ'ը վարուիս քու վերջը շատ  
 գէշ պիտ' ըլլայ , որովհետեւ մարդուս առա-  
 ջին պարտքն է նախ ընկերը սիրել և ձեռքէն  
 եկածին չափ անոր օգնել ըստ արժանոյն : Թէ  
 որ բերանդ հայհոյանքէ մաքրելով՝ սիրտդ ու  
 բերանդ չ'ը միացընես անպատճառ քու վեր-  
 ջըդ գեշանալով պիտի կորնջիս :

Ինքը զինքդ այնպէս վարժեցուցած ես որ  
 խօսքերուդ մէջ մինչեւ որ տուտ չ'ը գտնուին  
 սիրտդ հանգիստ չ'ըլլար , և կամ ինքը զին-  
 քըդ իրեւ ճարտարօրէն խօսող մը չ'ես հա-  
 մարիր : Իրաւ որ ծնունդդ բաղդաւոր է , սա-  
 կայն ցաւալին այն է որ մարդկային ընկերու-  
 թեան մէջ ստախօս մը ճանչցուած ես : Շատ

լաւ կ'ընես եթէ այս բազմամեայ բնաւորեալ  
 ախտը վրայէդ սրբես , բայց աս ալ բաւական  
 դժուար գործողութիւն մ'է : Ասի դիւրացնե-  
 լու միակ միջոցն ուրիշ բան չ'է , եթէ ո՛չ ըստ  
 կարելոյն քիչ խօսել և շատ մտիկ ընելն է :  
 Քանզի բնական է որ շատախօս մը կամ անի-  
 մաստ պիտի խօսի կամ իր խօսքերը սուտե-  
 լով պիտի զարդարէ : Ահա՛ այս սակաւախօ-  
 սութեան եղանակաւը ստախօսութիւնդ բնա-  
 կանաբար կը նուազի հետզհետէ և կ'անհետա-  
 նայ , և այն ատեն գալիք է բաղդերդ կրնաս  
 ըստ արժանոյն ՚ի քեզ ընդունիլ :



Ճամանակաւ զուարթագէմ և զուարթա-  
 սիրտ մէկն էիր բայց պարագաներն այնպէս  
 բերին որ քիչ միջոցի մէջ զուարթութիւննե-  
 րդ տրտմութեանց փոխուեցան , վիշտ ու ցա-  
 ւերդ շատցան գրեթէ բոլոր ձեռնարկութեան-  
 ցըդ մէջ թէ ընտանեկան և թէ առեւտրա-  
 կան : Սեւամազ անձէ մը խարուած և անոր ո-  
 լողայթին մէջ ընկած ես , թէեւ երկու ան-  
 դամ փրկուեցար այդ որոգայթէն բայց բո-  
 լորովին ազատած չ'ես , քու հինգ բաղդե-  
 րդ առ ոչինչ սլացած են , Լաւ կընես եթէ  
 20 օրի չափ տեղէդ հեռանալով խիստ բազ-

մամարդ. քաղքի մը մէջ ժամանակ անցնելէդ. վերջը նորէն տեղդ դառնալով գործես, զի այս օդոց և կենաց եղանակի փոփոխութենէն ետքը քեզ հասնելիք երկու նշանաւոր բաղդերուդ արժէքը պիտի կրնաս դիտնալ, ապա թէ ոչ ապագայ վիճակդ ջաւալի կ'ըլլայ:

88

'Ի մօտակայս մեծ բաղդ մ'ունիս որ զքեզ կատարելագէս պիտի գրկէ մի' տնտնար, գընա՛ շուտով մաքրուէ՛ և երեք աւուր մէջ տասը քսան անգամ՝ երեսդ ու ճակատդ պաղ ջրով լուա՛ և զգուշացի՛ր ջրտէ և միանգամայն առաւել տաքէ, որպէս զի՛ արիւնդ չ'ապականի և միշտ արթուն և ուժով դանուիս քու բարօրութեանդ միջոցին:

Հոււտտա՛, որ շատ մը բաղդեր ունիս հետորդհետէ յաջորդելու, և 'ի քեզ հանգչելու: Բայց գգոյշ կեցի՛ր նաև մազերը դեղնազոյն և աչաց գոյնը բաց եղող անձանց հետ որ և է յարարերութիւն ընելէ, զի՛ այսպիսեաց արիւնը քու արեանդ հետ բնաւ չ'ը համաձայնի: Չանա որ միշտ արթուն ըլլաս և խոհեմութիւնն ու դարցուածոց հաշուեկշիւը ձեռքդ բնաւ չ'ը թողուս. զի՛ մի՛ գուցէ արիւնդ խանգարի և մոլորիս:

89

Աչքդ լոյս, ուրախութեան ժամերն հասած են քեզի և խիստ քիչ աւուրց մէջ ուրախառիթ աւետիսներ պիտ' ընդունիս և ներկայ վիճակդ քու կարծածէդ ու փափաքածէդ աւելի պիտի բարւոքի: Շատ չ'եմ ըսեր, բայց բաւական նեղութիւն կրեցիր ալ նէ՛ նոյն տեսակաւոր նեղութիւններէն ալ բաւական օգուտ քաղեցիր. զի՛ փորձառութիւն ունեցար, որ քեզի մեծապէս պիտի նշարտտէ ապագայ գործոցդ մէջ: Չ'եմ խաբուիր եթէ ըսեմ թէ՛ այսուհետեւ մէկու մը աչքերը դիտած ատենդ այն անձին ինչպէս ըլլալը, գէշութիւնը կամ աղեկութիւնը հարիւրին եօթանասնի չափ կրնաս ճանչել և հասկնալ մանաւանդ այսուհետեւ եւս առաւել: Գուն ընտանեացդ և շատ մ'անձանց ուրախութեանը բարեկեցութեանը և երջանկութեանը պատճառ պիտ' ըլլաս և զքեզ բոլոր ճանչողներուն ալ սիրելի: Ասկէց աւելին ալ ի՞նչ կուզես:

90

Քեզի համար, անկրթութիւնը կրթութեան տեղ անցած է, զի՛ դուն այնպէս կը կարծես

որ վերջին աստիճան կրթեալ ես, բայց ընդհակառակն վերջին աստիճան էչ ես : Անկըթութիւնն ու կոշտութիւնը լաւագոյն կերպով արմատացուցած է և շատ դժուար ու գուցէ անկարելի է քու արմատացեալ անկիրթ բնաւորութիւնդ կրթականի փոխել, ուստի՛ լաւ կընես եթէ ժամ մը յառաջ յ'աշխարհէս փոխիս, որպէս զի՛ ուրիշներուն կրթական ընթացքն ու եղանակը չ'ը խանգարես : Իսկ եթէ յ'աշխարհէս փոխիլը քեզի ծանր կ'երեւի, դոնէ այնպիսի երկիր մը փոխադրուիս որ քու անկրթութիւնդ ու խշային կոշտութիւնդ ՚ի հիմանց ջախջախուի :

Բարեսիրտ և քաղցրաբարոյ մէկն ես, բայց փորձառութիւնդ նուազ ըլլալուն պատճառաւ՝ շատ անգամ գործոցդ մէջ կը սխալիս : Ըսել կուզեմ՝ թէ՛ դուն չ'ես սխալիւր, բայց կը սըխալեցնեն զքեզ : Զի կը շողքորթեն և կը ծեփծփեն, իաւ կընես եթէ զդուշանաս աշաց բիբերն ստեպ խաղցնող և բարձրախօս անձերէ : զի՛ ասոնց արիւնը բնաւ չ'ը յարմարիրքուարեանդ : Վեց բազդ ունիս դալու, որոնց երկուքը գրեթէ խիստ մօտ են : Քեզի համար

միօրինակ կեանքը օգտակարագոյն պիտ' ըլլայ : Քնհատութիւնն ու անժամանակ քնանալը կամ նուազ կամ առաւել ննջելը կամ խանարնթոր ճաշելը, քու կենացդ ու գործոցդ ընթացիցը մեծ արդելք կ'ըլլայ : Իաւ կընես նաեւ՝ եթէ ստեպ ստեպ բազմամարդ տեղեր գտնուիս և մարդկային ծանր ընկերութեանց մէջ ժամանակ անցնես :



Անձնական պատիւդ անձնական շահուգրհող մէկն ես : Զքեզ ասոր անոր ճշմարտախօս և ազատախօս կը քարոզես, սակայն զբուրձարձաբանական եղանակաւ կեդուորութիւնըդ առատ է : Անկէց ՚ի զատ՝ շատ երկչոտ մէկն ես, և գրեթէ ամէն բանէ կը վախնաս և այս երկիւղայից բնաւորութեանդ պատճառաւ շատ մը բաղդեր օտնակոխ ըրած ես : Փա՛ւք տո՛ւր որ դէմդ շագանակագոյն մաղերով մէկն ելաւ ժամանակաւ՝ որուն արիւնք քու արեանդ հետ համաձայնելով բաւական միջոց, գործերդ յաջողութեան մէջ ընթացան : Եթէ այն անձը չ'ըլլար թշուառ և յոռի վիճակ մը պիտ' ունենայիր : Զանա՛ փոխել այդ կեղծաւորական և երկիւղայից բնաւորութիւ-



նորդ, երակէդ 40 տրամի չափ արիւն հանե-  
լով՝ զի արիւնդ թանձրացած ըլլալով՝ կը վախ-  
ցուի թէ օր ըստ օրէ՛ ՚ի ձախողութիւն կը դի-  
մես :

## 93

Քարքդ ու վարքդ կանոնաւոր է և մարդ-  
կային ընկերութեան մէջ գովելի, սակայն՝  
յանձանք մ'ունիս որ ստեպ ստեպ կը հեշտա-  
նաս, զի՛ աւելի բնութեան օրէնքը գործադ-  
րելու հակամիտ ես քան թէ անոր չափաւո-  
րութեան պէտքն զգալու : Իրաւ որ ատի մեծ  
յանձանք մը չ'է, բայց մարդկային ընկերու-  
թեան պահանջածին ճիշդ համեմատն ալ չ'է,  
և այս պատճառաւ շատ ժամանակներ եղած  
են, որ անձիդ վրայ տիրապետած հեշտութե-  
նէն յաջորդող թուլութիւնը քու կենսական  
և առեւտրական ընթացքիդ, թէեւ թեթեւ՝  
բայց մլասներ հասուցած է : Դուն շատ բաղ-  
դաւոր անձ մ'ես, եթէ ընթացքդ ալ կանո-  
նաւորես և չափաւորես, տարակոյս չ'ը կայ  
որ հսկայաքայլ յ'առաջ պիտ' երթաս քիչ  
ժամանակի մէջ, Ձի՛ արեան շրջանդ խիստ  
կանոնաւոր է :

## 94

Ուրիշին համար չար կամեցող մէկն ես  
Բնութիւնդ խիստ է և գոռոզութիւնդ ալ ա-  
ռատ : Ասոնցմէ զատ՝ բարոյականութիւնդ ալ  
խանդարուած է և մեծ դարմանի կը կարօտի :  
Ընտանեաց վրայ պահանջուած սէրը չ'ունիս,  
և եթէ դուն այս յոռի սովորութեանց գերի  
չ'ըլլայիր, տարակոյս չ'ը կար որ նշանաւոր  
մէկը պիտի փայլէիր մարդկային ընկերութեան  
մէջ զի՛ ծնունդիդ մէջ շատ բաղդաւոր ես :  
12 Բաղդ անցեր են վրայէդ և կրնամ ըսել  
որ անոնց խիստ քիչէն կրցեր ես օգուտ քա-  
ղել : 7 Բաղդ ալ ունիս ապագայիդ մէջ : Սա-  
կայն մինչեւ որ մարդկային գեղեցիկ ընկե-  
րութեանց մէջ գոնէ վեց ամիս կեանք ու ժա-  
մանակ չ'անցնես, չ'ը պիտի կարենաս զանոնք  
վայելել : Ալ ի՛նչպէս կուզես այնպէս ըրէ՛ :

## 95

Ահա՛ կը տեսնեմ մէկը, որ կրթութեան  
չափազանց փափաք ու միտում ունի :

Ուրախ եղիր դուն շուտով յառաջ պիտի  
գաս և ՚ի կարգս նշանաւոր անձանց պիտի դա-  
սիս, զի՛ ուշադիր և հետաքրքիր ես ամէն

քաներու : Ասոր համար ալ , խիստ քիչ ժա-  
մանակի մէջ խիստ շատ քան պիտի ուսանիս :  
Յաղդդ քեզի միշտ օգնական կ'երթայ զի՝ ար-  
իւնդ մաքուր է և դարմանի բնաւ կարօտու-  
թիւն չ'ունիս : Այլ քիչ մը ծովային օդափո-  
խութեան պէտք ունիս որպէս զի՝ ժրութիւն  
և քաջութիւնն աւելնայ վրադ , ասօնք ամե-  
նակարեւոր կը համարուին քու բաղդերուդ  
օգտին համար : Չանա՛ մի՛ տնտնար , ժամ մը  
յառաջ օդափոխութեան այս խնդիրը լուծէ  
որ 10 օրեայ գործադրութիւն մ'է : Խիստ  
մութ սեւ ժագերով և ակռաները մեծ անձանց  
հետ յօրաբերութիւն մի՛ ըներ : Չըլայ նաեւ  
որ ննջման եղանակդ խանգարես : Ուշադրու-  
թիւն և սովորութիւն ըրէ՛՝ միշտ կէս գիշերէն  
մէկ ժամ՝ յառաջ յ'անկողնի կամ լաւ պա-  
տսպարեալ ծածկոցով քնանալու , զի՛ մի՛ ար-  
եան շրջանդ խանգարի :



Հիւրասեր մէկն ես , բայց ընկերութեանց  
մէջ ատեն ատեն կը թացիկնաս , ասիկայ քու  
հեշտասէր բնաւորութեանդ մէկ արգիւնքն է ,  
բայց կրթական օրէնքին մէջ պակասութիւն  
մը : Սակայն աս ըսելով չ'եմ՝ ուզեր ըսել թէ՛

Թացիկութիւնն 'ի հիմանց թողուս և կոշտու-  
թիւնն անոր տեղ յաշորդեցնես , զի՛ լաւա-  
դոյն է թացիկ ու զէվզէկ ըլլալ քան թէ՛ կոշտ  
ու էշ : Ուստի՛ ջանա՛ որ առանց կոշտութեան  
գիմելու թացիկութիւն չափաւորես կամ՝ ա-  
ռանց զայն ամբողջապէս փախցնելու բարե-  
կրթութեան ու բարեձեւութեան փոխես ըն-  
թացքդ : Մէկն համոզելու համար բառական  
վարպետ ու ճարպիկ ես : Հարկ եղածին չափ  
ալ բաղդաւոր ես և պիտի կրնաս երջանկու-  
թեամբ կեանք անցնել յ'այսմ՝ աշխարհիս :



Շատ անգամ քու գործոցդ մէջ կը շփո-  
թիս և կը բարկանաս ու կ'սկսիս դէշ կարդալ ,  
ասոր պատճառը քու արեանդ խանգարեալ  
ըլլալն է : Շուտով դարձան կուղէ , որ այս  
խանգարումն այլ եւս չ'երկարի և չ'ը ծանրնայ :  
Մի՛ տնտնար քեզի մաքրութիւն կակղութիւն  
մարմնոյ , վերանորոգում արեան և օդափո-  
խութիւն անձի պէտք է : Քու շփոթեալ վիճա-  
կըդ քեզի ծանրացուցեր է , և խօսուած քդ ալ  
անհասկնալի եղած է : Ըսել չ'եմ՝ ուզեր որ  
խօսածներդ չ'ը հասկցուիր : Այլ մէկու մը հետ  
խօսած ատենդ քու ներկայ արիւնդ այն ան-

ձին արեանը 'հետ չ'ը համաձայնիր : և Բաղդ  
ունիս ապագայիդ մէջ : Ջանա՛ որ քու վերա-  
նորոգմամբդ կարենաս անոնց պտուղը վայե-  
լել :



Սքանչելի բնաւորութեան տէր մէկն ես ,  
սակայն ձեռքդ թոյլ է : Չ'եմ ըսեր թէ չուայլ  
ես : Այլ Կփէն քիչ մ'աւելի լայնածեռն կամ  
առատածեռն ըլլալդ քեզի յանձանք մը կըր-  
նայ սեպուիլ : Ասկէց զատ՝ պակտութիւն մ'ալ  
ունիս , որ բաւական փորձառու չ'ըլլալուդ  
համար , ուրիշին խօսքերուն դիւրութեամբ  
կ'անսաս :

Բաղդերդ շատ ընտիր և նշանաւոր են . և  
Ցի չափ կան : Ասոնք հետզհետէ պիտի յա-  
ջորդին և քեզի մօտենան և դուն ալ անոնց  
յարգն ու օգուտը պիտի ճանչես : Սակայն  
զգոյշ կա՛ց խիստ սեւ մազերով ու շատախօս  
անձանց հետ յարաբերութիւն ունենալէ : Չի՛  
մի՛ գուցէ ասոնց հետ յարաբերութիւն ընե-  
լովդ քու արեան շրջանդ խանդարի : Միօրի-  
նակ գնա՛ և բնաւ մի՛ վախնար :

